ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _____
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՎ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ք. Երևան «____» «_____» 2025թ.

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ ի դեմս տնօրեն Գևորգ Սիմոնյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և քաղաքացի _____ (այսուհետ՝ Ունկնդիր), մյուս կողմից, ովքեր ստորև հիշատակվում են որպես «Կողմ» և միասին՝ որպես «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրի առարկան Ունկնդրի՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2020 թվականի մարտի 12-ի «Սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգմանը մասնակցելու համար հավակնորդների ուսուցման կարգը սահմանելու մասին» N 106-Ն հրամանի հավելվածով հաստատված կարգին (այսուհետ՝ ուսուցման կարգ) և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2025 թվականի հուլիսի 24-ի «Սնանկության գործով կառավարչի որակավորման ստուգմանը մասնակցելու համար հավակնորդների ուսուցման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին» N 469-Լ հրամանին (այսուհետ՝ ուսուցման ծրագիր) համապատասխան՝ Կազմակերպությունում առկա (կամ ուսուցման կարգով նախատեսված դեպքերում հեռավար) ձևով ուսուցման դասընթաց անցնելու պայմաններն է (այսուհետ՝ ուսուցման դասընթաց):

1.2 Ուսուցման դասընթաց կազմակերպվում է, եթե տվյալ դասընթացին մասնակցելու համար դիմում ներկայացրած անձանցից Կազմակերպության հետ պայմանագիր կնքել և վճարում կատարել է առնվազն 10 հավակնորդ (Ունկնդիր): Եթե պայմանագիր կնքած և վճարում կատարած հավակնորդների (Ունկնդիրների) թիվը 10-ից պակաս է, ապա Կազմակերպությունը նրանց ուսուցումը կազմակերպում է տվյալ տարվա ընթացքում անցկացվող հաջորդ ուսուցման շրջանակներում, ընդ որում՝ տվյալ դեպքում հավակնորդի (ունկնդրի) վրա հավելյալ վճարում իրականացնելու պարտականություն դրվել չի կարող:

1.3 Ունկնդիրը հավաստում է, որ մինչև սույն պայմանագրի կնքելը ծանոթացել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով նախատեսված սնանկության կառավարչի որակավորման չափանիշներին և ցանկանում է մասնակցել ուսուցման դասընթացին:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ունկնդիրն իրավունք ունի՝

1) ուսուցման դասընթաց անցնել ուսուցման կարգին և ծրագրին համապատասխան,

2) ուսուցման դասընթաց անցնելու ընթացքում անվճար օգտվել Կազմակերպության գրադարանից,

3) Կազմակերպության տնօրենին գրավոր ներկայացնելու առաջարկություններ և դիտողություններ ուսուցման դասընթացի կազմակերպաիրավական հարցերի կապակցությամբ:

2.2 Ունկնդիրը պարտավոր է.

1) կատարել Կազմակերպության կանոնադրության և ներքին կարգապահական կանոնների պահանջները,

2) պարտադիր հաճախել (մասնակցել) ուսուցման դասընթացին և սահմանված ժամկետներում կատարել ուսումնական գործընթացի ժամանակացույցով (և դասախոսների հանձնարարությամբ) նախատեսված գործառույթները,

3) խնամքով վերաբերվել Կազմակերպության գույքին՝ վնաս պատճառելու դեպքում հատուցել նյութական վնասը,

4) հարգել Կազմակերպության աշխատողների և ունկնդիրների (ուսանողների) իրավունքներն ու օրինական շահերը,

5) սույն պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսուցման դասընթացի վճարը,

6) կատարել ուսուցման ծրագրով նախատեսված պահանջները,

7) հաճախել (մասնակցել) ուսուցման դասընթացի դասախոսություններին և սեմինար (գործնական) պարապմունքներին (Կազմակերպության կողմից սահմանված դասացուցակին և ժամանակացույցին համապատասխան),

8) ունենալ ուսուցման դասընթացին հեռավար ձևով մասնակցելու (միանալու) համար (ուսուցման կարգով նախատեսված դեպքերում հեռավար ձևով դասընթացներ իրականացնելու պարագայում) անհրաժեշտ (սարգին վիճակում) նյութատեխնիկական միջոցներ (համակարգիչ, տեսախցիկ, խոսափող, համացանցի հասանելիություն և այլն):

2.3 Կազմակերպությունը պարտավորվում է՝

1) կազմակերպել Ունկնդրի ուսուցման դասընթացը՝ ուսուցման կարգին և ծրագրին համապատասխան՝ առկա (կամ ուսուցման կարգով նախատեսված դեպքերում հեռավար) ձևով,

2) ուսուցման դասընթացի ընթացքում Ունկնդրին ապահովել ուսուցման ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացն ապահովող բոլոր պայմանները,

3) Ունկնդրի համար ստեղծել հնարավորություններ՝ օգտվելու կազմակերպության գրադարանից,

4) Ունկնդրի ուսուցման դասընթացի իրականացումն ապահովել բարձրակարգ մասնագետներով, դասավանդման ժամանակակից մեթոդներով, համապատասխան ուսումնական գրականությամբ, ուսուցման տեխնիկական միջոցներով և այլն:

2.4 Կազմակերպությունն իրավունք ունի՝

1) Սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն Ունկնդրի կողմից չկատարելու կամ անբարեխիղճ կատարելու դեպքում նրան ենթարկել ներքին կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև ուսուցման դասընթացից հեռացնել.

2) Ունկնդրին հեռացնել ուսուցման դասընթացից՝ դրա վճարը սույն պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում.

3) Ուսուցման դասընթացը տեսաձայնագրել, այդ դասընթացին Ունկնդրի հաճախելիությունը (մասնակցությունը) փաստելու նպատակով:

3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ունկնդրի ուսուցման դասընթացի հայտարարված արժեքը (վճարը)՝ սույն պայմանագիրը կնքելու պահին, կազմում է 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

3.2 Սույն պայմանագրի կնքման փուլում Ունկնդիրը պարտավոր է ուսուցման կարգի (հավելվածի) 13-րդ կետին համապատասխան (պայմանագիր կնքելու ժամկետում) վճարում կատարել սույն պայմանագրի 3.1 կետում նշված ուսուցման դասընթացի հայտարարված արժեքի հիսուն տոկոսի չափով՝ 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ: Վերոնշյալ վճարումը կատարվում է սույն պայմանագրում նշված Կազմակերպության հաշվեհամարին՝ վճարման անդորրագիրը ներկայացնելով Կազմակերպություն:

3.3 Ուսուցման կարգի (հավելվածի) 13-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Կազմակերպությունը կատարում է վերահաշվարկ յուրաքանչյուր հավակնորդի (Ունկնդրի) մասով դասընթացի վերջնական արժեքը որոշելու համար՝ հաշվի առնելով պայմանագիր կնքած բոլոր հավակնորդների (Ունկնդիրների) ընդհանուր թիվը: Վերահաշվարկի արդյունքում յուրաքանչյուր հավակնորդի մասով դասընթացի վերջնական արժեքը որոշելուց հետո հավակնորդները տեղեկացվում են դասընթացի վերջնական արժեքի, արդեն իսկ վճարված գումարի տարբերության չափով հավելյալ վճարում կատարելու անհրաժեշտության և վճարման չափի մասին: Կազմակերպության տեղեկացումը ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, Ունկնդիրը պարտավոր է սույն պայմանագրում նշված Կազմակերպության հաշվեհամարի վրա կատարել սույն կետով հաշվարկված հավելյալ վճարումը՝ վճարման անդորրագիրը ներկայացնելով Կազմակերպություն:

3.4 Ուսուցման դասընթացից Ունկնդրին հեռացնելու (ազատելու) կամ այդ դասերին չներկայանալու (չմասնակցելու, բացակայելու) դեպքում, ինչպես նաև ուսուցման կարգին համապատասխան Ունկնդրի կողմից ուսուցում չանցած համարվելու դեպքում Ունկնդրի վճարված Վճարը ենթակա չէ վերադարձման:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է ուսուցման դասընթացի ամբողջ ժամանակահատվածի համար, բացառությամբ սույն պայմանագրի 6-րդ գլխում նշված դեպքերի:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5.1 Կազմակերպության կողմից սույն պայմանագիրը միակողմանի ենթակա է վաղաժամկետ լուծման հետևյալ դեպքերում՝

1) Ունկնդրի կողմից տարբեր պատճառներով ուսուցման դասընթացն ընդհատելու դեպքում,

2) Ունկնդրի կողմից սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով սահմանված իր պարտականությունները չկատարելու դեպքում:

3) Ունկնդրի կողմից սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում և չափով Վճարը չվճարելու դեպքում:

5.2 Ունկնդրի կողմից սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝ Կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված ուսուցման դասընթաց չիրականացնելու դեպքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կողմերն իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագիրը կնքելուց հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի ազդեցության (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ) հետևանքով, որը Կողմերը չէին կարող կանխատեսել և կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6.2 Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

7.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագիրը կազմված է երկու իրավահավասար օրինակից, որոնց մեկական օրինակներն ի պահ են հանձնված Կողմերին:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ	ՈՒՆԿՆԴԻՐ
«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900018004821 ՀՎՀՀ 02509478 ք.Երևան, Մ. Խորենացու 162ա	_____ հաշվառված՝ _____. Անձնագիր՝ _____, տրված՝ _____թ., _____-ի կողմից,
Տնօրեն՝ _____ Գ. Սիմոնյան (ստորագրություն) Կ.Տ	Ունկնդիր՝ _____ _____ (ստորագրություն)